և առաջնորդութիւն. սբ. Հոգւոյ և ձեռնտուութիւն. նորին ըստ իմում կարի գրեցի զսբ. աւետարանս ի թվաբերութեան. հայկազեան տումարի ՉԻ (= 1471), ի հայրապետութեան. տր. Արիստակէսի ի յաթոռ սբ. Էջմիածնի։ Եւ ի թագաւորութեան. Վրաց Բագրատին, և ի Ղանութեան. Հասան բէկին...»։ «Արդ գրեցաւ սբ. աւետարանս ի գաւառս Արարատեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց» (Ցաւել. Բ. 53. Ձեռ. Երևան. № 134/129)(*)։

Ամբողջ ԺԶ. դարից միայն մի յիշատակ ունինք այս վանքում, մի խաչքար թուագրուած ՌԴ (= 1555) (Ցաւել. Ա. 153)։

Այնուհետև վանքի մասին տեղեկութիւն չունինք մինչև ԺԷ. դարի սկիզբը՝ Շահաբասի արշաւանքը, երբ ի միջի այլ վանքերի բացւում է և կողոպտւում նաև Աղջոց վանքի դարանը պարսիկ ասպատակների կողմից, տանելով Արիստակէս հայրապետի աջը Թաւրիզ շահաստան. ապա «հանդիպեալ ոմն վաճառական Բաղիշեցի այր մեծատուն, ետ գինս և թափեաց ի յանօրինաց և երեր ի քաղաքն իւր Բաղէշ»(**). բայց ինչպէս երևում է աջը բերւում է դարձեալ իւր տեղը։ Ըստ Դաւրիժեցու Մելքիսեդ կաթուղիկոսը պարսքի փոխարէն գրաւ է դնում Արիստակէս հայրապետի և «զաջն Աղջուց վանից Ս. Ստեփանոսի», որ ապա ազատում է Մովսէս կաթուղիկոսը։ Մելքիսեդ կաթուղիկոսն էլ ծագմամբ Աղջոց վանքից էր(*), իսկ ժամանակակից առաջնորդն էր Միքայէլ եպիսկոպոս(**)։

Զաքարիա Սարկաւագը 1625 թուին (ՌՀԴ) յիշում է «Պետրոս արեղայ Աղջոց վանից», որ պատմել էր նրան Յոհաննայ վանքում Դառչղայ խանի սպանման մասին Վրաց կողմից(***)։ Ցիշատակարաններից տեղեկանում ենք, որ 1679 թուի մեծ շարժից չրջակայ միւս վանքերի հետ աւերուել է «եւ Ախջոց վանքն»(****), բայց յետոյ նորոգուած պիտի լինի, որովհետև ԺԸ. դարի սկզբում վանահայրն էր Մովսէս անունով մէկը, և ապա չէն էր մինչև դարի կէսերը, Լէզգիների վերջին արշաւանքը(*****), որովհետեւ Ջամբռի գրութեան ժամանակ դեռ չէն էր. վանքի վիճակն էին կազմում Ճաթղուան, մեծ եւ փոքր Գլանները. առաջինը Կոտայքում, իսկ երկրորդները ոչ հեռու վանքից՝ Քեղուայ ձորում։

(*) Դանիէլ վարդապետի և նորա շինել տուած Սեւանի նշանաւոր զրան մասին տես մեր յօդուածը. Անահիտ, 1932, թ. 5-6. «Սեւանի Առաքելոց զուռը»։ Այդ զուռը այժմ գտնւում է Երեւանի թանգարանում։

(**) Ձեռ. Էջմ. № 519։

(*) Դաւրիժեցի Բ. տպագր. Էջմ. 7. 227, 304։

(**) Ալիշան, Այրարատ, 354։

(***) Զաքարիա, եր. 28։

(****) Ձեռ. Էջմ. № 548 (Կար. 534). 317բ.։ Ջալալեան, Բ. 127։

(*****) Ալիշան, Այր. 354։ Լէզգիների կամ Լեկաց առաջին արշաւանքը կատարուեցաւ 1721 թ. (Շահխ. Բ. 293։ Ձեռ. Էջմ. № 616, 205ա)։ Երկրորդ արշաւանքը նկարագրում է Սիմէոն կաթուղիկոսը իւր մէկ գրութեան մէջ. «Թուղթ առ քաղաք արքայն Վրաց Հերակլ վասն ասպատակելոյ Լեկվեացն յերկիրս մեր». տալիս է բաւական մանրամասն նկարագրութիւն այդ արշաւանքի, բայց ինչ որ Երևանի և Էջմիածնի շրջակայքին է վերաբերում. հեռաւոր տեղերի մասին լռում է (Ձեռ. № 747. ճԽԸ)։